ԹԵՄԱ 2

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Թեմայի ամփոփում

(լրացուցիչ հարցեր և առաջադրանքներ)

1. Մեզ համար ինչո՞ւ է կարևոր արեգակնային համակարգի և Երկրի առաջացման իմացությունը:
2. Բացատրե՛ք Երկրի ձևի գծապատկերը:
3. Թվարկե՛ք և բացատրե՛ք Երկրի գնդաձևության ու չափերի աշխարհագրական հետևանքները:
4. Թվարկե՛ք և բնութագրե՛ք երկրագնդի թաղանթները:
5. Թվարկե՛ք և բացատրե՛ք Երկրի ներծին և արտաքին ուժերը:
6. Որո՞նք են երկրագնդի ներքին կառուցվածքի ուսումնասիրման հիմնական մեթոդները:
7. Ի՞նչ է գեոսինկլինալը: Համառոտ ներկայացրե՛ք գեոսինկլինալային մարզերի և գոտիների առաջացումը:
8. Ի՞նչ կապ կա երկրակեղևի հիմնական հատվածների և մակերևույթի խոշոր ձևերի միջև:
9. Թվարկե՛ք արտաքին ուժերը և նշե՛ք դրանց գլխավոր առանձնահատկությունները:
10. Համառոտ բնութագրե՛ք հողմահարման տեսակները:
11. Բնութագրե՛ք սառցադաշտերի կատարած ռելիեֆագոյացնող աշխատանքը: Նշե՛ք ռելիեֆի ձևեր:
12. Բացատրե՛ք հեղեղումների տեսակները և հետևանքները:
13. Համառոտ բացատրե՛ք ներծին աղետները: Նշե՛ք օրինակներ:
14. Բացատրե՛ք փոթորիկների առաջացման գլխավոր պատճառները և համառոտ ներկայացրե՛ք դրանց աշխարհագրությունը: Ի՞նչ է տոռնադոն:
15. Ի՞նչ գիտե՛ք Կոպեռնիկոսի արևակենտրոն ուսմունքի մասին:
16. Ի՞նչ է տարին: Տարվա ի՞նչ անվանումներ կան: